27 դեկտեմբերի 2018 թվականի N 1550- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 1401-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատման արտոնությունից օգտվելու համար «ԱՐՄԵՆԻԱՆ ՀԵԼԻՔՈՓԹԵՐՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 1401-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը՝

1) հավելվածը 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ կետով.

«

2.	8802 11 0003	Ուղղաթիռ Airbus H125, քաղաքացիական	Հիմնական բնութագիրը՝ անձնակազմ/ուղևորներ 1+5 Թռիչքի տվյալները՝ թռիչքի հեռավորությունը՝ 634 կմ, առավելագույն արագությունը՝ 287 կմ/ժ, կրեյսերական արագությունը՝ 253 կմ/ժ, խնայողական արագությունը՝ 220 կմ/ժ, թռիչքի առավելագույն բարձրությունը՝ 7010 մ Ընդհանուր չափերը՝ առավելագույն թռիչքային քաշը՝ 2250 կգ, օգտակար բեռնվածությունը՝ 1075 կգ, ուժային սարքավորումը՝ Մոդել ARRIEL 2D, քանակը՝ 1, թռիչքի հզորությունը՝ 632 ԿՎ, կրեյսերական քարշուժը՝ 543 ԿՎ Լիցքավորման տարողունակությունը՝ վառելիքի բաքի տարողունակությունը՝ 540 լ	հատ	1	Ֆրանսիա	1,168,802,100.00

».

2) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «271,400,000.00» թիվը փոխարինել «1,440,202,100.00» թվով: